

124/341

= 926

375 : 375

375.5

122

1593

Տեխնիկական լուսակացման դաշ-  
տական օպերատոր ՅԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՍՏՈՒ-  
ԳՈՒՄՆԵՐԻ

Ծ Ր Ա Գ Ր Ե Ր Ը

ԱՐՑԼՈՒԽԳԼԽՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Յերևան—1927

**ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԱՅԱՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

1. Տեխնիկում ընդունվում են՝ համաձայն Արհետուսպարչության կողմից հաստատված ընդունելության ծրագրերի՝ Շ-ամբա, զուղ-յերիտ. և զուղատնտեսական դպրոցներն ավարտած 15—20 տարեկան տղաներ ու աղջիկներ:

ԾԱՆՈԹ.—Բացառիկ գեղքերում Արհետուսպարչության թույլատվությամբ կատար են ընդունվել և ավելի մեծահասակներ:

2. Տեխնիկում ընդունվել ցանկացողները ներկացացնում են՝ համապատասխան դիմում տվյալ տեխնիկումին, կցելով նրան հետեւալ վավերաթղթերը:

1. Կրթական վկայական, 2. ծննդյան վկայական, 3. զինծառայության վերաբերյալ վկայական, 4. խընդրատվի արտադրական և հասարակական ստաժի վկայական և 5. դիմողի ծնողների կամ իր սոցիալական գրությունը ճշտող փաստաթուղթ:

ԾԱՆՈԹ.—Քլուստմերը կարելի յե փոստով ուղարկել համապատասխան տեխնիկումին, կցելով նրան 2 հատ ութ կոգեկանոց համակաղըոշմ:

3. Տեխնիկում գնդունվողները ներկայացնում են պետք բուժք հիմնարկից ստացած համապատասխան վկայական իրենց առողջության մասին:



1803-ԱԳՀ

Տիրառեպվար 293

Տիրած 600

Գետհրատի 2-դ տպարան Յերեվանում—750

**ԾԱՆՈԹ.**—Տեխնիկում չեն կարող ընդունվել այն քաղաքացիները, զորոնք տառապում են հետեւալ հիվանդություններով:

1. Թոքերի պալարախտ, կոխի բացիլները գըտնը լինելու գեղքում, 2. Սիֆիլիսն իր վարակիչ շրջանում մինչև վարակիչ լերեւութների վերանալը, 3. Բորոտացալ, ըինուալիերում և մաշկի պալարախտ, յեթի մարմնի բաց մասերի վրա խոցեր կան, 4. վուկրերի և գեղձերի պալարախտ ֆիստուներով, 5. չարորակ խուլեր, 6. մաշկի հիվանդություններ՝ այդինի, կզակի և մարմնի գոնջուկ և ածելող վորքինի (стригущий лихорадка. парва) զանազան տեսակներ, մինչև այդ հիվանդությունների վերացումը, բ) մաշկի հիվանդությունների վոչ վարակիչ տեսակներն այն գեղքում, յերբ նրանք տարածված են մարմնի բաց մասերի վրա և ծավալվում են մեծ չափով, վորով և խանգարում են ուսման, 7. սրտի որդանական ախտ կուպենսացիալի խանգարումով, 8. միզալին գործարանների ախտեր՝ անմիզապահության հետ միասին, 9. ծանր նեֆրիտներ, 10. աչքի հիվանդություններ՝ կոռալերի վոլորք և շրջումն ակնախնձորի բորբոքման յերեվութներով, տրախոմա խորն ինֆիլտրացիայով(մինչև բուժվելը), 11. ականջների խոռոչուն, 12. հոգեկան հիվանդություններ, 13. ծանր նյարդալին հիվանդություններ—եպիլեպսիա հաճախ կրկնվող նոպտներով, սուրբ վիտսի պար (սուր արտահայտված), 14. սուր արտահայտված տրավմատիկ ներողներ:

4. Ակաղեմիական ստուգման յենթակա բոլոր ինդրատունները ստուգվում են համապատասխան տեխնիկումում հետեւալ առարկաներից.

1. Հայ և ոռոս լեզուներից, 2. հաստրակաղիտու-

թյունից և աշխարագրությունից, 3 մաթեմատիկայից (նաև գրաֆիկայի տարերք).

**ԾԱՆՈԹ. 1.**—Լուսմաղկումափի կողմից հաստատված ընդունելության ժամանակ պահանջվող ստուգելի առարկաների ծրագրերը կարելի յեւ ստանալ տեխնիկումներում:

**ԾԱՆՈԹ. 2.**—Գեղարվիստական արդյունաբերական տեխնիկում ընդունվածները յենթարկվում են նաև հատուկ ստուգումների, վորոնց նպատակն եւ վորոշել ընդունվողի գեղարվիստական ընդունակությունները և նրա պատրաստության աստիճանն ընդունակությանը հետեւու համար:

5. Տեխնիկում ընդունվում են՝

ա) բանվորներն ու աշխատավոր գյուղացիները (չքափոր և միջակ) և նրանց զավակները, Համ. Կոմիկուսի (ր.) և Համ. ԼկՅԵՄ անդամները, մանկատան սաները, նաև այն անձինք, վորոնց իրավունքները գոլրոցական հիմնարկություններ ընդունելու տեսակետից հավասարված են բանվորներին և աշխատավոր գյուղացիներին (սրանք են՝ կարմիր բանակայիններ, Կարմիր բանակի և նավատորմի հրամանատարական-գարչական և քաղաքական կազմը և պետքաղվարչության աշխատակիցներն ու նրանց զավակները, Կարմիր բանակի հաշմանդամներն ու նրանց զավակները, գյուղուկան լուսաշխատավորների, գյուղի և գավուակալին բժիշկների և այլ բժշկա-սանիտարական աշխատավորների ու տեխնիկումի զասատուների զավակները):

բ) աշխատավոր ինտելիգենցիայի, ծառայողների, արհեստավորների և տնախնագործների զավակները.

գ) այլք:

Յյուրաքանչյուր գրուպույի սահմանում գերազանցություն և տրվում՝

տ) ակադեմիապես ավելի պատրաստվածներին և  
բ) տեխնիկումի մասնագիտության համապատասխան արտադրական ստաժ ունեցողներին:

Մասնագիտական թեքում ունեցող բ. աստիճանի դպրոցի շրջանավարտները կարող են ընդունվել իրենց մասնագիտությանը համապատասխանող տեխնիկումի 2-րդ կուրսը, յեթե նրանք լրացուցիչ ստուգին ահիսնիկումի 1-ին կուրսում ավարտվող մասնագիտական առարկաներից:

6. Տեխնիկում ընդունված ուսանողների քանակը չպետք է բարձր լինի Արհլուսգլխվարչության կողմից սահմանված նորմայից:

ԾԱՆՈԹ.—Սահմանված նորմայից խստարամներ կարող են տեղի ունենալ միայն Արհլուսգլխվարչության թույլատվությամբ:

7. Տեխնիկում ընդունվելու համար դիմումներ արվում են ողոստոսի 1-ից—27-ը։ Նորեկների ակադեմիական ստուգումները կատարվում են սեպտեմբերի 1-ից—10-ը։ Նորմալ պարագմունքները սկսելուց 3 որ առաջ՝ տեխնիկումը հայտարարում է ընդունված նորեկների ցուցակները։ Նորմալ պարագմունքները տեխնիկումներում սկսվելու են սեպտեմբերի 15-ին։

8. Տեխնիկում ընդունված նորեկ ուսանողները հեռացվում են տեխնիկումից, յեթե նրանք ակադեմիական տարեսկզբից՝ առանց հարգելի պատճառների՝ շաբաթվա ընթացքում չեն սկսել ակադեմիան պարագմունքները։

9. Նորեկ ուսանողների ընդունելությունը կատարելու նպատակով տեխնիկումին առնիշեր սկսուասությունը՝ սեպտեմբերի 15-ը գործում է նորեկների ընդունելության հանձնաժողովը հետեւալ կազմով։

6

1. Տեխնիկումի վարիչը կամ նրա տեղակալը (նախագահ), 2. տեխնիկումի մասնագիտությանը համապատասխանող արհեստական միության գավրյուրովի ներկայացուցիչը, 3. Համ. Կոմկուսի Գավկումի ներկայացուցիչը, 4. Համ. ԼԿՅԵՄ Գավկումի ներկայացուցիչը, 5. Տեխնիկումի դասատուների ընդհանուր ժողովում ընտրված ներկայացուցիչը, 6. Լուսաթամարդ ներկայացուցիչը, 7. Ռւսգործքուրովի ներկայացուցիչը։

ԾԱՆՈԹ. 1.—Կոոպերատիվ տեխնիկումի ընդունելության հանձնաժողովի մեջ և մտնում նաև Կոոպերհրդի ներկայացուցիչը։

ԾԱՆՈԹ. 2.—Ընդունելության հանձնաժողովում ըոլոր հարցերը վճարում են ճայների պարզ մեծամասնությամբ։

ԾԱՆՈԹ. 3.—Ընդունելության հանձնաժողովը իր աշխատանքների համար սպագործում է տեխնիկումի տեխնիկական ապարատը։

10 Ընդունելության հանձնաժողովը.

ա) կազմում ե ակադեմիական ստուգումներին յինթակա անձանց ցուցակը։

բ) կազմակերպում ե ակադեմիական ստուգումներ կատարելու նպատակով ստուգիչ հանձնաժողովներ, զեկավարում է վերահասու լինում նրանց աշխատանքին։

շ) սոցիալական գտման լինթարկելով ստուգումներին բավարար պատրաստություն հայտարերածներին՝ կատարում է տեխնիկումի նորեկների ընդունելությունը։

11. Նորեկների ընդունելության հանձնաժողովներն ընդունելության ժամանակ՝ առաջնորդվելու յին յուրաքանչյուր տիպի տեխնիկումին կցված շրջանայնացման (ռայոնիկացիալի) հետեւալ տախտակով։

7

1. Յերևանի Մանկավարժական տեխնիկում ընդունվում են՝ Յերևանի, Մեղրու, Նոր-Բայազետի և Դարալագյաղի գավառների 7-ամյա, զյուղերիտ. և գյուղատնտեսական գպրոցների շրջանավարտները:

2. Լենինականի Մանկավարժական տեխնիկում—Լենինականի, Զանգեզուրի և Դիլիջանի գավառներից:

3. Ստեփանավանի Մանկավարժական տեխնիկում—Փամբակ Լոռու գավառից:

4. Գաղարշապատի Մանկավարժական տեխնիկում—Եջմիածնի գավառից:

5. Յերևանի թթվական Մանկավարժական տեխնիկում—ՀՍԽՀ բոլոր գավառներից:

6. Յերևանի արգյունաբերական, գեղարվեստական—արգյունաբերական և կոստյումատիվ տեխնիկում—ՀՍԽՀ բոլոր գավառներից:

7. Յերևանի գյուղատնտեսական տեխնիկում—Յերևանի, Եջմիածնի, Մեղրու և Դարալագյաղի գավառներից:

8. Լենինականի գյուղատնտեսական տեխնիկում—Լենինականի, Փամբակ—Լոռու, Դիլիջանի, Նոր-Բայազետի և Զանգեզուրի գավառներից:

12. Ակադեմիական ստուգումներ կատարելու նպատակով տեխնիկումին առընթեր կազմակերպվում են ստուգիչ հանձնաժողովներ: Ստուգիչ հանձնաժողովները կազմում են ավալ տեխնիկումի դասաւուներից և հաստատվում են նորեկների ընդունելության հանձնաժողովի կողմից: Ստուգիչ հանձնաժողովները դեկանավարվում են Լուսժողկոմատի (Արհլուսզլիսվարչության) կողմից ստուգումներ կատարելու կարգի մասին հրատարակած հատուկ հրահանգով:

13. Սույն կանոնները խախտող նորեկների ընդունելության հանձնաժողովների վորոշումները կարող են բողոքարկվել Արհլուսզլիսվարչությանը, ըստ վորում բողոքները արվում են տեխնիկումի ընդունելության հանձնաժողովին, վորն իր լեզրակացության հետ 3 որվա ընթացքում ներկայացնում է այդ բողոքն Արհլուսզլիսվարչության ի կարգադրություն:

14. Նորեկների ընդունելության հանձնաժողովները՝ ընդունելության աշխատանքները վերջանալուն պես՝ պարագայոր են ինչպիս ընդունված նորեկների, այնպիս ել չընդունվածների բոլոր գոկումենտները և առանաբարակ ընդունելության ու ակադեմիական ստուգումների վերաբերյալ բոլոր նյութերը հանձնել տեխնիկումի վարիչին:

15. Տեխնիկումի ընդունելության հանձնաժողովը ներկայացնում է իր հաշվետու զեկուցումը տեխնիկումի վարիչին՝ տեխնիկումի նորմալ ակադեմիական պարագայունքներից վոչ ոչ, քան 10 որվա ընթացքում: Տեխնիկումի վարիչն իր հերթին ներկայացնում է Արհլուսզլիսվարչության իր հաշվետու զեկուցումը 1927—28 ակադ. տարիա ընդունելության մասին վոչ ոչ քան հոկտեմբերի 1-ը:

Արհլուսզլիսվարչության պետ՝  
ԽՈԶՄ.ՄԻՐԵՍ.Ն

Արհլուսզլիսվարչության մեք. տեսուչ՝  
Ա. ՄԵԼԻՔ-ՌՀԱՆՋԱՆՋԱՆ.ՆՅԱ.ՆՅԱ.Ն

Եղանակ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ

## ԾՐԱԳԻՐ

### ՅԵՐԿՐԱՎԱՓՈՒԹՅԱՆ

Երիվ զնական յերկրաչափություն, իսկ սխալամատիկ կուրսից հետեւալը.

#### Ներածություն.

Մաթեմատիկական առաջապրություններ սահմանումներ, աքսիոմներ, թեորեմներ՝ ուղիղ և հակազարձ, հետեւանքներ:

#### Հարբաշափություն (պլանիմետրիա)

Ուղիղի աքսիոմների նրանցից բղիսող հետեւանքները: Ուղիղ հատված: Հատվածների հավասարությունը և անհավասարությունը: Հատվածների գումարը և տարրերությունը:

#### Ո. Եկունեներ.

Անկյան կողմերը և գագաթը: Հավասար և անհավասար անկյուններ: Անկյունների գումարը և տարրերությունը: Կից անկյուններ: Ուղիղ անկյուն, ուղղանյաց ուղիղին, ուղղանյացի հիմքը, թեղ և ուղիղը ուղիղ և սուր անկյուններ: Թեորեմներ կից անկյուն-

ների մասին: Հետեւանքներ: Հակադիր (վերտիկալ): անկյուններ, թեորեմներ հակադիր անկյունների մասին:

#### Հարբաշափություն.

Բազմանկյուն, պարագիծ: Յենունկյունը: Յեռանկյունների բաժանումը: Յեռանկյան՝ ամենազիստավոր զերը: Հավասարասորունդ յեռանկյան հատկությունները: Գալափար համաչափության առանցքի մասին: Յեռանկյունների հավասարություն համականիշները: Յեռանկյան անկյունների և կողմերի կախումը իրարից: Թեորեմ՝ յեռանկյան արտաքին անկյան մասին: այս թեորեմի հետեւանքը, թեորեմները յեռանկյան հավասար և անհավասար կողմերի գիմաց գանվող անկյունների մասին: Նրանց հակադարձ թեորեմներ, արդ թեորեմներից բղիսող հետեւանքները:

#### II

Յեռանկյան մեջ յուրականչյուր կողմը փոքր և մյուս յերկու կողմերի գումարից և մեծ՝ նրանց տարրերությունից: Աւոուցիկ բեկլալը կորճ և նրան բնորդությունը տիեզերական մեջ բեկլալից:

Յեռանկյուններ, վարոնք ունեն 2 ական համապատասխանաբար հավասար կողմեր, իսկ այլ կողմերի միջև ընկած անկյունները հավասար չեն: Ուզգանայց և թեղ գծեր, նրանց մասին թեորեմներ: Ուզգանկյունների հավասարությունը: Աւզիզ հատվածի միջնուղղանացից հատկությունը: Անկյան կիսողի հատկությունը: Յերկրաչափական տեղ, կտուցման հիմնական խնդիրները: Զուգահեռ ուղիղներ:

Հիմնական թեորեմներ: Համապատասխան զուգահեռ կամ ուղղանյաց կողմերը ունեցող անկյուն-

ների յեռանկյան և բազմանկյան անկյունների դուշաբը:

Զուգահեռակողմ, սւղանկյուն (շեղանկյուն) և քառակուսի. Այն թեորեմները, վորոնք արտահայտում են նրանց անկյունների կողմերի անկյունագծերի հատկությունները, կենտրոնական համաչափությունն զատվածի բաժանելը հավասար մասերի:

Թեորեմ յեռանկյան լերկու կողմերի միջնակետերը միացնող ուղիղի մասին: Թեորեմ արապեցի կողմերի միջնակետերը միացնող ուղիղի մասին: Երջաղիծ, շրջան, շառավիղ, արամագիծ, ուղիղ, լար, հատող և շոշափող գծեր, սեկտոր, սեգմենտ: Երջաղիծի և ուղիղի ընդհանուր կետերի թիվը: Յերեք կետերի վրայով տանել շրջաղիծ: Ուղիղների հավասարությունը և անհավասարությունը: Տրամագծի հատկությունները: Այն հարաբերությունը, վոր կա ուղիղների, նրանց ձգող լարերի և վերջինների հեռավորության մեջ կենդրոնից:

Թեորեմներ շոշափողի և շոշափման կետով տարած շառավղի մասին: Այն շոշափողի դրությունը, վորը զուգահեռ և լարին: Խնդիրների տված շրջաղիծն կամ լերկու շրջաղիծներին տանել շոշափողներ:

Երջաղիծերի հարաբերական դիրքը:

Մեծությունների չափումը:

Անկյունների չափումը ուղիղներով: Կենտրոնական անկյուն և նրա չափը: Անկյունաչափ: Ներգծած անկյան չափումը: Համապատասխան կառուցման խնդիրներ: Թեորեմներ այն անկյունների մասին, 1-ին, վորոնց գագաթները զանգում են շրջանի մեջ (բայց վոչ կենտրոնում) 2-րդ, կամ շրջաղիծից դուրս, (կողմերը

հատողներ են, կամ կողմերից մեկը կամ լերկուսը շաշափողներ են):

Ներգծած և արտագծած բազմանկյուններ:

Արտագծել յեռանկյան շուրջը և նրա մեջ ներգծել շրջաղիծ: Ուսուցիկ ներգծած քառանկյան հակաղիք անկյունների հատկությունը: Ուսուցիկ արտագծած քառանկյան հակաղիք կողմերի հատկությունը:

#### Նման պատկերներ

Նման յեռանկյուններ: Այն թեորեմները, վորոնք արտահայտում են յեռանկյունների նմանությունը: Նման բազմանկյուններ: Նման բազմանկյունների վերածումը նման յեռանկյունների: Նման բազմանկյունների պարագծերի հարաբերությունը: Նման գասավորված ձևեր:

Բոլոր անցածի վերաբերյալ հաշվելու խնդիրներ:

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԱՆՐԱՀԱՅԵՎԻ

ա.—Բնական թվեր և նրանց վրա գործողություններ: Հավասարության և անհավասարության նշաններ:

Ուղիղ գործողությունների հիմնական որենքները:  
 1)  $a+b=b+a$  (տեղափոխման որենք) 2)  $(a+b)+c=a+(b+c)=a+b+c$  (զուգորդական որենք). 3)  $a+b=b+a$ : միշտ իրենից ներկայացնում է մի թիվ: Հակադարձ գործողությունների սահմանումը:

$a+b=b$ ,  $a \cdot b=b$ :  $V_a^2$ : Կոտորակ թվերի ծագումը (թիվը բարևանման առաջի ընդարձակումը): Կոտորակ թվերի վրա չորս գործողություններ կատարելը:

Տառերի գործածության ոգտակարությունը հանրահաշվում: Հանրահաշվական արտահայտություններ՝ գործակից, աստիճան բարձրացնելը: Միանդամ և բազմանդամ: Նման անդամների միացնելը: Հանրահաշվական արտահայտություններին թվական արժեքներ տալը: Ինչ կարգով պիտի կատարել գործողություններ, չեթե փակագծեր չկան: Փակագծերի գործածությունը և նրանց նշանակությունը, Միանդամների և բազմանդամների վրա չորս գործողություն կատարելը:

Գումարի և տարրերության քառակուսին:—

Գումարի և տարրերության արտադրյալը: Նրանց լերկրաչափական բացատրությունը: Պարզ հավասարություններ, պարզ հավասարություններով խնդիրներ կազմելը: —Հարաբերական թվեր: Հարաբերական թվերի բազմապատկումը և բաժանումը. բացասական թվերի աստիճան բարձրացնելը, միանդամների և բազմանդամների բազմապատկումը: Գումարի և տարրերության խորանարդը:

Կրծատ բազմապատկումներ ֆորմուլաների միջոցով: Բազմանդամների բաժանումը միանդամով, բազմանդամների բաժանումը բազմանդամով:

Տանական սխատեմի թվարկությունը, ինչպես կանոնավոր զասավորված բազմանդամ:

Հավասարություններ՝  $2x=5$ ,  $7x=-4,2,19-3x=14-8x$ , բազմանդամների բազմապատկիչների վերածելը (մասնավոր գեղգեր): Հանրահաշվական կոտորակներ: Հանրահաշվական կոտորակների կրծատումը: Հանրահաշվական կոտորակների վրա չորս գործողությունները: Մոտավոր ճշտությամբ գործողություններ կատարելը. գրանց գործածությունը լերկրաչափության մեջ և ֆիզիկայում (մակերեսների և ծավալների հաշվելը մոտավոր ճշտությամբ): Համեմատություններ, համեմատությունների աხսության գործածությունը:

գ.—Առաջի աստիճանի հավասարություններ: Միանհայտով առաջի աստիճանի հավասարություններ կազմելը: Առաջի աստիճանի լերկու և ավելի անհայտներով հավասարությունների վճռելը ա) գործակիցների հավասարմանը (արտածման ձևով վճռելը: Յերկու և ավելի անհայտներով հավասարություններ կազմելը, խառը խըն-

գիւներ յերկրաչափությունից, Գիզիկալից և այլ հարակից առարկաներից:

Թվարանություն: Թվարանական գործողություններ ամբողջ թվերի հետ: Զափեր: Հասարակ և տառնորդական կոտորակներ: Պարբերական կոտորակներ: Հարաբերություններ և համեմատություններ: Աւղիդ և հակագործ համեմատություն: Տոկոսներ: Յերից կան:

## ԾՐԱԳԻՐ

### ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ

1. Յոթնամյա դպրոցի լրիվ գառընթացք.
2. Ընթերցանություն:— Ազատ և սահուն կարգավ պատմել և վերլուծել գրվածքները՝ հասարակական, սոցիալական և գեղարվեստական տեսակետներից:
3. Քերականություն:— Ստուգարանություն և համաձայնություն:
4. Քերականության ահսություն:— վոճարանություն, զիտելիքներ զրվածքների ահսուկների մասին:
5. Գրականություն:— Համասուր ծոնոթություն արեւելանայ զրողների մասին:
6. Գրավոր:— անսխառ (աւզպազրական տեսակետից) շաբազբություններ, վերապատռմ, բնութագրություն. կյանքից վերցրած ինքնուրույն պատմվածքներ, նկարագրություն, հիշողություններ, տպավորություններ և այլն:

## Պրօցրամմա

### По русскому яз

1. Беглое правильное чтение небольших статей и рассказов.

2. Самостоятельная передача прочитанного.  
3. Ответы на вопросы, поставленные преподавателем.

4. Знание наизусть стихотворений и басен, выученных раньше.

5. Письменное заполнение анкеты (ответы на вопросы: где родился, когда, из кого состоит семья и т. п.).

6. Грамматика — глагол, спряжение глаголов. Времена, наклонения. Правописание глаголов.

Имя существительное. Родовые окончания. Имена существител. с шипящей буквой на конце. Склонение.

Синтаксис простого предложения.

7. Письменные упражнения по грамматике.

---

## ՀԱՍՏԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### I ՅԵՐԿՐԻ ՅԵՎ ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ.

### I ԽՍՀՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1. Հողատիրություն և հողոգագործում. Հացարուկսերի մշակուլիթ. տեխնիք. բույսերի մշակուլիթ, այգեգործություն և բանջարաբուծություն, անասնաբուծություն, թռչնաբուծություն, շերամապահություն, մեղվարություն, անտառագործություն, Խ. Ս. Հ. Մ. Անդրկովկասյան Ֆեղերացիալի և Հայաստանի Ս. Խ. Հ. գյուղատնտեսական ուղոնիգացիա:

2. Խ. Ս. Հ. Մ. պետական արդյունաբերությունը: Մասնավոր և ոտար արդյունաբերությունը և նրանց աննշան դերը: Մանր արդյունաբերություն. — տնայնագործական և արդյունաբերություն. Տեղական և կենտրոնական արդյունաբերություն: Ժ. Տ. Գ. Խ և նրա տեղական մարմինները:

#### Գրականության Ա-ին կետի

- ա) Բորիսով. Տնտեսական աշխարհագրություն  
(Յ-րդ զԼ. Վլուղատնտեսություն)
- բ) Հ. Հովհաննիսյան. Համաստ աշխարհագրություն

## Գրականություն 2-րդ կետի

ա) Բորիսով. Տնտեսական աշխարհագրություն.  
(Տնտեսագործություն՝ 214—218 էջ):

3. Մեր արգյունաբերությունը — ձեռք բերվող և  
մշակվող — ամենալարենք ճյուղերը, — մետաղ, վառելիք,  
մեքենաների և հաղորդակցության միջոցների կառու-  
ցումը. Ելեկտրաարդյունաբերության, մանվածալին,  
քիմիական ֆունդամենտական հում նյութեր և սննդի  
մթերքները. Նախաղատերազմյան դրությունը և ուրիշ  
յերկիրների հետ համեմատությունը. Հայաստանի հա-  
մար՝ պղնձաարդյունաբերություն, գինեգործություն,  
մանվածալին արգյունաբերություն. Հայաստանի խոր-  
հրդացին իշխանության ջանքերը յերկրի ինդուստրիա-  
լիզացիաի զործում:

## Գրականություն

ա) Բորիսով. Տնտեսական աշխարհագրություն,  
(4-րդ զԼ. արգյունաբերություն):

4. Խ. Ա. Հ. Մ. արգյունաբերության դանաշան  
ճյուղերի աշխարհագրական գասավորությունն ըստ  
բնական և տնտեսական պայմանների:

## Գրականություն

ա) Բորիսով. Տնտեսական աշխարհագրություն.  
(Բարձնացում, տնտեսական սայոններ 13—31 էջ):

5. Փոխանակություն և շուկա: Ճանապարհներ և  
հաղորդակցության միջոցների դերը:

## Գրականություն

ա) Բորիսով. Տնտեսական աշխարհագրություն.  
(հաղորդակցության ճանապարհներ 218—235. ներքին  
տոկոսություն՝ 238—243 էջ):

6. Բանվոր գասակարգն և արգյունաբերական  
ապրանքների հիմնական արտադրողը: Խ. Ա. Հ. Մ.  
բանվոր գասակարգի քանակն ու աճումը: Հայաստանի  
բանվորության թվի աճումը, գորպես յերկրի ինդուս-  
տրալիզացիաի հետեւանք:

## 2. ԽՈՐԴՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԸ ՅԵՎ Խ. Ա. Հ. Մ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

1. Խորհրդային իշխանության ելությունը: Նրա  
տարրերությունը բուրժուական պետության կարգեր-  
ից, (միահեծան, զեմոկրատիկ հանրապետական):

2. Բանվորների և գյուղացիների միությունը,  
վորը կովկելու Խ. Ա. Հ. Մ. սահմանադրությամբ:  
Աշխատավորների իրավունքի դեկլարացիա: Խորհրդա-  
յին իշխանության սերտ կապը աշխատավորական  
մասսաների հետ:

## Գրականություն 1, 2, յեվ 3-րդ կետի:

ա) Բերդնիկով և Սվետլով.—Քաղաքական գրա-  
դիտության գասընթաց. (1-ին զԼ. 8. Խորհրդ. իշխա-  
նութ. ու խորհրդ. հանրապ. կազմակերպ. 188—223  
էջ. 2-րդ հավելված 1-ին Անդրկ. Սֆիչ սահմանա-  
դրութ.):

3. Խ. Ա. Հ. Մ. սահմանադրությունը վորպես  
խորհրդակին պետության հիմնական որենք: Աշխատա-

վորների ընտրական իրավունքները: Խորհրդավիճ իշխանության կազմակերպումը կհնարոնում և տեղերում: Ժողովրդական կոմիսարիատներ և նրանց աշխատանքը: Խորհրդավիճ իշխանության քաղաքականությունը Խ. Ա. Հ. Մ. մեջ ապրող գանադան ազգությունների նկատմամբ: Այդ քաղաքականության միջազգային (ինտերնացիոնալ) բնույթը: Խնքնուրուն (ավտոնում) հանրապետություններ: Խորհրդավիճն սոցիալիստական հանրապետությունների Միության Անդրկովկասյան Ֆեդերացիայի և Հայաստանի սահմանադրությունը:

#### ՄԵՐ ԽՆԳԻՒԹԵՐԸ ՊՐՈՎՈՎԱ

1. Գլուղանտեսական գործունելություն բնական պայմանները և նրանց ազգեցությունը գլուղական անտեսության բնույթի վրա: Գլուղանտեսական շրջանների մասին հասկացողություն:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) Բորիսով. Տնտեսական աշխարհագրություն  
(51—50 և 13—32 էջ)

բ) Հովհաննիվան. Համառոտ աշխարհագրություն:

2. Գլուղ. անտես. ցած մակարդակը և բարձրացնելու ճանապարհները: Հողաշինարարություն, ջրաշինարարություն, գլուղական անտեսության մեջենացումն: Ելեքտրոֆիկացիայի նշանակությունը: Կոռուպերացիայի նշանակությունը գլուղական անտեսության բարձրացման գործում: Մասսայի ինքնողությունը և ինքնազործունելությունը: Պետական ողնություն:

3. Ծանոթություն տեղական գյուղացիական անտեսության բարելավման ծրագրին:

#### ԱԼՍԻՄԱՆ Շ-ՐԴ ՏԱՐԻ

#### ՀԱՄԱՅՆԻԱՐԵԱԿԻՆ ՏԵՏԵՆՈՒՐՅՈՒՑ

1. Անդի և հում նվութի, հիմնական մթերքների, վառելիքի ու մետաղի՝ ձեռք բերելու, մշակելու ու պահեստների արտադրության — համաշխարհային ամենակարևոր կենտրոնների աշխարհագրական դաստիքումը: Աշխատանքի բաժանման բնական պայմանները:

2. Յերկրագնդի գանադան շրջանների անտեսական կապը: Յերկրագործական և ծանր արդյունաբերական յերկրները, իբրև համաշխարհային անտեսության մասեր:

3. Սպառման առարկաների և արդյունաբերության միջոցների արտադրման համաշխարհային աճումը՝ տեխնիկայի զարգացման հետ կապված:

4. Ծանր արդյունաբերական ամենախոշոր յերկրները (Հ. Ամ. Միացյալ նահանգները, Մեծ Բրիտոնիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ճապոնիան):

Նրանց գաղութներն ու նրանցից կախված յերկրները: Խ. Ա. Հ. Մ.-ի տեղը համաշխարհային տընտեսության մեջ:

#### 2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳԸ ԻՐԻԵՎ ԿԱՊԻ- ՏԱԼԻԶՄԻՑ ՍՈՑԻԱԼԻԶՄԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԱՆՑՈՂԻԿ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳ.

1. Տեխնիկայի զարգացումը և արտադրական ուժերի աճումը: Հակասությունների որումը կապի-

տալիստական հասարակության ներսում: Նա ընդունակ է տիրապետելու արտազրական ուժերի աձումը: Իմպերիալիզմ: Իմպերիալիստական պատերազմներ և արտազրական ուժերի անխմաստ վատնումն:

2. Պրոլետարիատ: Նրա պայքարը: Բուրժուազիայի անկումը և հեղափոխական շարժման աճումը անխռուսափելի յէ:

### Գրականություն 1. ի 6 յեզ 2-րդ կետերի

ա) Բերդնիկով և Սվետլով. Քաղ. գրագ. դաս. (1. կապիտալիզմի զարգացումը մինչև ֆրանսիական կապիտալի դարաշրջանը, 2. ֆրանսիական կապիտալն ու իմպերիալիզմը, 3. պատերազմն ու կապիտալիզմի ճակատագիրը 20—91 էջ):

բ) Տյումենեվ. — Աշխատանքի պատմություն: Արտազրության համակենտրոնացում 143—148: Իմպերիալիզմ 149—155 դաստկարգալին հակասությունների սրբելը 156—159: Բանվոր դաստկարգի քաղաքական կոիզը 166—173: Արտազրության անշիսանություն 174—178):

գ) Արտ. Կարինյան Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը:

դ) » » Դաշնակցությունը վաստերի դեմ,

3. Արտազրության համակնացում: Շահագործման վոչնչացումն, դաստկարգերի և պետության անհետացումը: Տնտեսության և աշխատանքի սլլանաչափ (ծրագրված) կազմակերպումն: Արտազրական ուժերի զարգացումն: Կենցաղի և կյանքի ձերի փոփոխումը: Ասցիալիստական հասարակակարգ: Ապագալի կոմունիստական հասարակությունը:

### Գրականություն:

ա Բերդնիկով և Սվետլով. — Քաղաքազիտության վանդական հասարակությունն ու անցման հասարակակարգը, 136—162 էջ),

բ. Տյումենեվ «Աշխատանքի պատմություն» (սոցիալիզմ, 178—184 էջ):

4. Խորհրդական կարգն իրեն անցողական՝ սոցիալիզմին անցնելուն: Տնտեսության գլխավոր ճյուղերի ազգայնացումն (խոշոր արդյունաբերություն, հող, հալորդակցության միջոցներ): Սոցիալիստական շինարարության «հրամայող բարձրունքներ»: Տնտեսության ծրագրումն: Տնտեսության ծրագրման դժվարությունները մի յերկրում, ուր տիրապետողն է մանր գյուղացիական տնտեսությունը:

5. Կոռպերացիալի նշանակությունն ու զերը: Կոռպերացիան զեպի սոցիալիզմ տանող իսկական ուղին եւ: «Քաղաքակիրթ կոռպերատորների հասարակարգ»:

### Գրականություն

ա. Կոռպերացիա և զյուղական տնտեսություն:

բ. Ժավորոնկով և Զյուրինսկի հետամնաց և անհատական գյուղացիական տնտեսություններից զեպի կոլեկտիվ տնտեսություն:

6. Համաշխարհական տնտեսության և կապիտալիստական յերկրների հետ կապ ունենալու անհրաժեշտությունը: Պալքար մեր տնտեսության անկախության համար: Արտաքին առեարի մենաշնորհը: Յերկրի ինդուստրիալիզացիա:

7. Խորհրդավին միությունը իբր համաշխարհային հեղափոխության մարտական ճակատ։ Բուրժուական ողակավորումն։ ԽՍՀՄ-ի պալքարը քաղաքական անկախության համար։ Մեր արտաքին քաղաքականությունը իմպերիալիստական և ճնշված յերկրների նկատմամբ (Արևմուտքի և Արևելքի), Կարսիր բանակ։

8. Կուլտուրական բարձրացման աճումն ու անհրաժեշտությունը։ Կուլտուրական ճակատ։ Կյանքի ձևերի փոփոխումն։

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Բ. ԱՍ. ԴՊՐՈՅԻ ՀԱՍՏԱԿԱՎ- ԳԻՏՈՒԹՅԱՆ (ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ) ՀԱՄԱՐ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

1. Ժավորոնկով և Զյուբինսկի։ — Հետամնաց և անհատական գյուղացիական տնտեսությունից դեպի կոլեկտիվ տնտեսություն։


2. Լենինը և գյուղացիները։
3. Խ. Ս. Հ. Մ գյուղատնտեսությունը։
4. Գործարանն ի՞նչ ե տալիս գյուղին։
5. Բանվորն ու գյուղացիները։
6. Կոոպերացիա և գյուղական տնտեսություն։
7. Գյուղացու աշխատանքները։
8. Գյուղի հարուստներն ու չքավորները։
9. Քաղաք և գյուղ։
10. Խորհրդավին իշխանությունը գյուղում։
11. Հ. Հովհաննիսյան։ — Համառոտ աշխարհագրություն։

12. Հ. Ազատյան։ — Թեղիսներ Հայաստանի խորհրդայնացման ծրդ տարհարձի առթիվ։

13. Բորիսով։ — Ծնոտեսական աշխարհագրություն։

14. Բերդնիկով և Սվետլով։ — Քաղզրագիտության դասընթեր։

15. Արտ. Կարինյան։ — Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը։



ՀՅ Ազգային գրադարան



NL0945463

7. Խորհրդակին միությունը իբր համաշխարհային հեղափոխության մարտական ճակատ։ Բուրժուական ողակավորումն։ ԽՍՀՄ-ի պատքարը քաղաքական անկախության համար։ Մեր արտաքին քաղաքականությունը իմացերիալիստական և ճնշված յերկրների նկատմամբ (Արևմուտքի և Արևելքի)։ Կարմիր բանակ։

8. Կուլտուրական բարձրացման աճումն ու անհրաժեշտությունը։ Կուլտուրական ճակատ։ Կյանքի ձևերի փոփոխումն։

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Բ. ԱՍ. ԴՊՐՈՑԻ ՀԱՍՏԱԿԱ- ԳԻՏՈՒԹՅԱՆ (ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ) ՀԱՄԱՐ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

1. Ժավորոնկով և Ջլուրինսկի։ — Հետամնաց և անհատական գյուղացիական տնտեսությունից դեպի կոլեկտիվ տնտեսություն։


2. Լինինը և գյուղացիները։
3. Խ. Ա. Հ. Մ գյուղատնտեսությունը։
4. Գործարանն ի՞նչ ե տալիս գյուղին։
5. Բանվորն ու գյուղացիները,
6. Կոռպերացիա և գյուղական տնտեսություն։
7. Գյուղացու աշխատանքները.
8. Գյուղի հարուստներն ու չքավորները.
9. Քաղաք և գյուղ։
10. Խորհրդակին իշխանությունը գյուղում։
11. Հ. Հովհաննիսյան։ — Համառոտ աշխարհագրություն։

12. Հ. Ազատյան։ — Թեղիսներ Հայաստանի խորհրդայնացման 5-րդ տարեղարձի առթիվ։

13. Բորիսով։ — Տնտեսական աշխարհագրություն։

14. Բերդնիկով և Սվետով։ — Քաղղրագիտության դասընթեր։

15. Արտ. Կարինյան։ — Իմացերիալիստական պատերազմը և Հայաստանը։



ՀՀ Ազգային գրադարան



NL0945463

20 May

1524

1927 p.

341

492

1803

192 - 600

15